ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << *ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/74*>>

ք. Երևան <<21>> << ապրիլի>> 2017 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Շինարար-97>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Ահարոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի հ.37 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքների սկիզբ է համարվում Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, իսկ աշխատանքների 50 % -ի կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 75- րդ օրացուցային օրը, իսկ մնացած 50 % -ի կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում՝ մինչև 2017թ օգոստոսի 30-ը ներառյալ:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ **նախագծին և ծավալաթերթին** համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն

պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված N 4) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 20 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **3781800.0 (երեք միլիոն յոթ հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր)** ՀՀ դրամ, որից **630300.0 (վեց հարյուր երեսուն հազար երեք հարյուր)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017 թ. ՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է **երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:**

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» << օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում **է www.gnumner.am հասցեով** ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8..14 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410743
ՀՎՀՀ 02593108

Գ. Զթրյան----------
Ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«Շինարար- 97» ՍՊԸ
ք. Գյումրի Տեքստիլագործների 29/3
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Գյումրու մ/ճ
Հ/Հ 205012200981
ՀՎՀՀ 05510886

Հ. Ահարոնյան----------
Ստորագրություն
Կ.Տ

Հավելված թիվ 1
<<21 >> ապրիլի 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/74>> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի հ.37 մանկապարտեզի հիմնանորոգման
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		Քանդման եւ ապամոնտաժման աշխատանքներ				
1	E46-109	Խեցեսալե հատակի քանդում	մ^2	77.0000	0.2779	21.3983
2	E46-119	Ցեմնտ-ավազային հարթեցնող շերտի քանդում	մ^2	77.0000	0.2415	18.5955
3	P11-229	Գաջե սվաղի քանդում առաստաղներից	մ^2	76.2000	0.6350	48.3870
4	P11-48	Առաստաղի վրայից սոսնձաներկի մաքրում	մ^2	76.2000	0.2191	16.6954
5	P11-225	Գաջե սվաղի քանդում պատերից	մ^2	173.0000	0.4856	84.0088
6	P11-48	Պատերի վրայից սոսնձաներկի մաքրում	մ^2	79.5000	0.2191	17.4185
7	P11-48	Պատերի վրայից յուղաներկի մաքրում	մ^2	56.5000	0.2191	12.3792
8	E46-88	10սմ հաստության միջնորմների քանդում	մ^2	11.0000	0.5336	5.8696
9	P13-5	Հախճասալի քանդում	մ^2	37.0000	0.3735	13.8195
10	E46-124	Փայտյա դռների ապամոնտաժում	մ^2	6.0000	0.7755	4.6530
11	E46-122	Փայտյա պատուհանների ապամոնտաժում /պատուհանագոգերով/	մ^2	12.0000	1.2984	15.5808
12	E46-124	Փայտյա վիտրաժների ապամոնտաժում	մ^2	14.0000	0.7755	10.8570
13	C310-13 տ.մ.կ. 29	Շին. աղբի հավաքում, բարձում եւ տեղափոխում 13կմ	տ	0.7600	2.3942	1.8196
		Բացվածքներ				
1	շուկա	Մետաղապլաստե սպիտակ ոչ պակաս 60 մմ հաստ. խցիկով, 4+4մմ ապակեփաթեթով պատուհանների տեղադրում /ներառյալ ա/փաթեթը, բ/փակիչը, սարքերը, ներկումը/	մ^2	6.3000	18.3016	115.3001

		բացվող				
2	շուկա	Մետաղապլաստե սպիտակ ոչ պակաս 60 մմ հաստ. խցիկով, 4+4մմ ապակեփաթեթով պատուհանների տեղադրում /ներառյալ ա/փաթեթը, ներկումը/ չբացվող	մ^2	5.4000	12.6039	68.0611
3	շուկա	Մետաղապլաստե դռների տեղադրում, վերնամասը ապակի 4մմ, ներքնամասը՝ լամինատ /ներառյալ սարքերը, կողպեքները, ներկումը/	մ^2	2.5000	21.7840	54.4600
4	շուկա	Մետաղապլաստե դռների տեղադրում, խուլ սպիտակ /ներառյալ սարքերը, կողպեքները, ներկումը/	մ^2	4.0000	21.7840	87.1360
5	շուկա	Մետաղապլաստե վիտրաժի տեղադրում /բացվող/	մ^2	5.8200	18.3016	106.5153
6	շուկա	Մետաղապլաստե վիտրաժի տեղադրում /չբացվող/	մ^2	9.8100	12.6039	123.6443
		<u>Հատակներ</u>				
1	E11-55 E11-56 K=2	Հարթեցնող շերտի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 30մմ հաստությամբ	մ^2	77.0000	0.8595	66.1815
4	P11-14	Ջրամեկուսիչ շերտի իրականացում մեկ շերտ իզոգամով	մ^2	77.0000	1.5489	119.2653
5	E11-135	Խեցեսալե հատակների պատրաստում	մ^2	77.0000	4.0478	311.6806
		<u>Հարդարման աշխատանքներ</u>				
1	E15-246a	Պատերի գաջե սվաղում բարելավված որակի	մ^2	79.5000	1.4539	115.5851
2	E15-603	Պատերի սվաղած մակերեւույթների մշակում գիպսային մածիկով	մ^2	79.5000	0.1068	8.4906
3	E15-262	Պատերի սվաղում ցեմենտային շաղախով բարելավված որակի, 20մմ հաստությամբ	մ^2	93.5000	1.2329	115.2762
4	E15-660	Պատերի ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, մածկապատումով	մ^2	79.5000	0.7355	58.4723
5	E15-82	Պատերի երեսապատում հախճասալով	մ^2	93.5000	4.2337	395.8510
		<u>Միջնորմներ</u>				
1	E8-169	Միջնորմների իրականացում թեթեւաբետոնե բլոկերից 10սմ հաստությամբ	մ^2	8.8000	1.9271	16.9585
2	E8-59	Շարվածքի ամրանավորում Ø10A500C ամրանով	տ	0.0300	317.1126	9.5134
3	E6-106 K=0.5	Բլոկերի դատարկությունների լցում ցեմենտ-ավազային շաղախով	մ^3	0.3000	31.5915	9.4775
4	E6-255	Միջնորմային բլոկերի եւ կոնստրուկցիաների միջեւ, կարաններում փրփրապլաստի տեղադրում 100x20մմ չափերի	գմ	7.3000	0.6764	4.9377
Նախահաշիվ N1-2 Ջրամատակարարում և ջրահեռացում						
		<u>Ապամոնտաժման աշխատանքներ</u>				
1	P19-54	Թուջե խողովակների ապամոնտաժում Φ100-Φ50	գմ	12.0000	0.5410	6.4920
2	P19-1	Պողպատե խողովակների ապամոնտաժում, Φ32-Φ15	գմ	9.8000	0.2113	2.0707
3	P19-69 P19-5 P19-76	Լվացարանների ապամոնտաժում, ներառյալ սիֆոնը եւ ծորակը	կ-տ	2.0000	0.7462	1.4924

4	Р19-74	Հոսակի ապամոնտաժում	հատ	2.0000	0.3462	0.6924
5	С310-13 տ.մ.կ. 29	Առաջացած շին. աղբի , տեղափոխում թափոնատեղ 13կմ հեռ. վրա	տն	0.5000	2.3942	1.1971
		Սանիտարական սարքեր				
1	Е17-84	Խոհանոցային լվացարանակոնքի մոնտաժում (600x600x400)	կ-տ	1.0000	13.4740	13.4740
2	Е17-28	Լվացարարանների տեղադրում, ներառյալ ծորակ-խառնիչը եւ սիֆոնը	կ-տ	1.0000	13.6179	13.6179
3	Е17-36	Հոսակի մոնտաժում	հատ	2.0000	3.0213	6.0426
		Ջրամատակարարման համակարգ				
1	Е16-262 К=0.5	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից Φ20մմ, հիդրավլիկ փորձարկումով	գմ	10.0000	0.6731	6.7310
2	12-811-1	DN20 փականի մոնտաժում	հատ	1.0000	2.1216	2.1216
3	Е16-296	Ջրաչափի տեղադրում Ø25մմ	հատ	1.0000	12.6697	12.6697
4	շուկա	Զտիչ Ø25մմ	հատ	1.0000	1.2671	1.2671
5	շուկա	de20x DN15 ճկուն կցորդիչների մոնտաժում	հատ	1.0000	0.3357	0.3357
6	շուկա	DN20 զգոն միացումների մոնտաժում	հատ	2.0000	0.2517	0.5034
7	շուկա	de20, α=90o արմունկի մոնտաժում	հատ	5.0000	0.0252	0.1260
8	շուկա	de25xde20 անցումային եռաբաշխիչի մոնտաժում	հատ	2.0000	0.0587	0.1174
9	շուկա	de20 եռաբաշխիչի մոնտաժում	հատ	2.0000	0.0336	0.0672
10	շուկա	de20 խողովակների պատերին ամրացման խամութների մոնտաժում	հատ	12.0000	0.0252	0.3024
		Ջրահեռացման համակարգ				
1	Е16-34	Կոյուղու PPr պոլիպրոպիլենային խողովակ, Φ110, հիդրավլիկ փորձարկումով	գմ	9.1000	1.4235	12.9539
2	Е16-33	Կոյուղու PPr պոլիպրոպիլենային խողովակ, Ø50, հիդրավլիկ փորձարկումով	գմ	3.0000	0.7782	2.3346
3	Е22-365	de50 α=90o արմունկի մոնտաժում	հատ	1.0000	0.7064	0.7064
4	Е22-365	de110 α=45o արմունկի մոնտաժում	հատ	1.0000	0.8827	0.8827
5	Е22-365	de50 α=45o արմունկի մոնտաժում	հատ	1.0000	0.6729	0.6729
6	Е22-366	de110 թեք քառաբաշխիչի մոնտաժում	հատ	1.0000	1.5539	1.5539
7	Е22-366	de50 թեք եռաբաշխիչի մոնտաժում	հատ	1.0000	1.0840	1.0840
8	Е22-366	de110xde50 անցումային թեք եռաբաշխիչի մոնտաժում	հատ	1.0000	1.2854	1.2854
9	Е22-365	de110xde50 անցումի մոնտաժում	հատ	1.0000	0.8407	0.8407

10	E22-365	de110 մաքրիչի մոնտաժում	հատ	3.0000	1.1092	3.3276
11	E22-365	de50 մաքրիչի մոնտաժում	հատ	4.0000	0.7736	3.0944
12	E22-365	de110 ստուգիչի մոնտաժում	հատ	3.0000	1.3526	4.0578
		Բակային ցանց				
		Ջրահեռացման համակարգ				
		Հողային աշխատանքներ				
1	E1-962	Խրամուղու մշակում ձեռքով IV կարգի գրունտներում	մ³	0.3000	2.4154	0.7246
2	E23-1	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում 10սմ հաստության	մ³	0.2000	2.3450	0.4690
3	E23-1	Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում	մ³	0.1700	2.3450	0.3987
4	E1-969	Խրամուղու ետլիցք կողալիցքի մշակված գրունտներից, տոփանումով	մ³	0.2400	0.6997	0.1679
5	C310-13 տ.մ.կ. 29	Ավելցուկային գրունտի տեղափոխում թափոնատեղ մինչև 13կմ	տն	0.1000	2.3942	0.2394
		Նախահաշիվ N1-3 էլեկտրալուսավորություն				
1	8-591-2	Անջատիչ միստեղանի	հատ	4.0000	0.6368	2.5472
2	շուկա	Բաժանման տուփ	հատ	4.0000	0.0755	0.3020
3	8-591-7	Վարդակ	հատ	7.0000	0.9029	6.3203
4	շուկա	Պլաստմասե տուփեր բնիկներում տեղադրելու համար (վարդակ,անջատիչ)	հատ	11.0000	0.1259	1.3849
5	E46-43	Բնիկների պատրաստում (100x100x70մմ)	հատ	15.0000	0.5598	8.3970
6	E46-57	Ակոսների պատրաստում (50x30մմ)	մ	70.0000	0.2202	15.4140
7	8-525-1	Միաֆազ ավտոմատ անջատիչ LR-32Ա	հատ	3.0000	2.6273	7.8819
8	8-612-5	Ավտոմատ անջատիչների պլաստմասե բաշխման տուփ	հատ	1.0000	6.3640	6.3640
9	8-601-2	Լյումինեսցենտային լամպով լուսատու L= 1.2մ, 2x36W	հատ	19.0000	4.0393	76.7467
10	8-402-2	Հաղորդալար պղնձե,բազմաջիղ ՊՊՎԳ 2x2,5 մմ²	գմ	40.0000	0.3969	15.8760
11	8-402-2	Հաղորդալար պղնձե,բազմաջիղ ՊՊՎԳ 2x4 մմ²	գմ	25.0000	0.4487	11.2175
12	11-840-6	Մալուխի սակառ 30x30մմ. 2մ, 5 հատ	գմ	30.0000	0.5892	17.6760
13	շուկա	Ամրակներ պլաստմասե (հաղորդալարերը պատին ամրացման համար)	հատ	80.0000	0.0084	0.6720
		Նախահաշիվ N1-4 Օդափոխություն				

1	20-743	Կանալային օդամուղ ներածման համար L=1200մ³/ժամ, P= 265Պա, N=0,2 կվտ, CA150	հատ	1.0000	40.8806	40.8806
2	20-743	Կանալային օդամուղ ներածման համար L=450մ³/ժամ, P= 265Պա, N=0,085 կվտ, CA150	հատ	2.0000	78.6418	157.2836
3	20-760	Էլեկտրական կալորիֆեր N=9,0 կվտ	հատ	1.0000	25.0555	25.0555
4	20-486	Հովանոց օդամղիչով L=300մ³/ժամ, N=0,085 կվտ	հատ	1.0000	23.1410	23.1410
5	20-108	Ուղղանկյուն օդատար ցինկապատ մետաղական թիթեղով 0,5մմ	մ²	27.0000	3.1655	85.4685
6	16-34	Կլոր օդատար PVC Φ250	գծմ	18.0000	3.6705	66.0690
7	16-34	Կլոր օդատար PVC Φ200	գծմ	22.0000	2.0929	46.0438
8	20-407	Ներածող արտածո կարգավորող ճաղաշար	հատ	15.0000	2.4099	36.1485
9		Մետաղական կոնստրուկցիա օդատարների ամրացման համար	կգ	20.0000	1.4044	28.0880
10	20-254	Գլխանոց Φ 500	հատ	3.0000	2.6896	8.0688
11	20-254	Գլխանոց Φ 450	հատ	1.0000	2.5847	2.5847
12	շուկա	Համակարգի փորձարկում և կարգաբերում	կ-տ	1.0000	12.9658	12.9658
		Ընդամենը /հազ. դր./				2865.000
		Շահույթ 10%				286.500
		Ընդամենը /հազ. դր./				3151.500
		ԱԱՀ 20%				630.300
		Ընդամենը /հազ. դր./				3781.800
		Որից Սարքավորումներ /հազ. դր./				352.020

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410743
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
Ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«Շինարար- 97» ՍՊԸ
ք. Գյումրի Տեքստիլագործների 29/3
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Գյումրու մ/ճ
Հ/Հ 205012200981
ՀՎՀՀ 05510886

Հ. Ահարոնյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
<< 21 >> ապրիլի 20 17 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/74>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի հ.37 մանկապարտեզի հիմնանորոգման

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի հ.37 մանկապարտեզի հիմնանորոգման	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը,	Աշխատանքների 50 % -ի կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 75-րդ օրացուցային օրը, իսկ մնացած 50 % -ի կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում՝ մինչև 2017թ օգոստոսի 30-ը ներառյալ

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410743
ՀՎՀՀ 02593108

Գ. Զթրյան----------
Ստորագրություն
Կ.Տ.

Կապալառու
«Շինարար- 97» ՍՊԸ
ք. Գյումրի Տեքստիլագործների 29/3
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Գյումրու մ/ճ
Հ/Հ 205012200981
ՀՎՀՀ 05510886

Հ. Ահարոնյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 3
<< 21 >> ապրիլի 2017թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/74>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի հ.37 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ	-	-	-	2 890 000	2 890 000	2 890 000	3 781 800	3 781 800	3 781 800	3 781 800	3 781 800	3 781 800	3 781 800

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410743
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------

Կ.Տ

Կապալառու
«Շինարար- 97» ՍՊԸ
ք. Գյումրի Տեքստիլագործների 29/3
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Գյումրու մ/ճ
Հ/Հ 205012200981
ՀՎՀՀ 05510886

Հ. Ահարոնյան----------

Կ.Տ

Հավելված թիվ 4
<<21>> ապրիլի 2017թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/74>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

	Կատարված աշխատանքի							
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<<21>> <<ապրիլի>> 2017թ. կնքված
N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/74 *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կապալառուի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/74

(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

<<21>> ապրիլի 2017 թ.

<<Շինարար-97>>, ՍՊԸ-ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Հ. Ահարոնյանի անձնագրային տվյալները AM 0202637 տրված 08.02.2011թ 016 կողմից>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի h.37 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների** ձեռքբերման <<ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/74>>* ծածկագրով բաց գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Կապալառու

«Շինարար- 97» ՍՊԸ

ք. Գյումրի Տեքստիլագործների 29/3

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Գյումրիում/6

Հ/Հ 20501220098[illegible]menia

ՀՎՀՀ 05510886

Հ. Ահարոնյան----------

(ստորագրություն)

Կ. Տ

1.

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «Շինարար- 97» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Գյումրու մ/ճ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 205012200981

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 05510886

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

10. Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900015211429

.2.Գումարը թվերով և բառերով՝378180.0 /երեք հարյուր յոթանասունութ հազար հարյուր ութսուն/

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովում

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ԵՔ-ԲԲԱՇՁԲ-17/74

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.S.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ Հ. Ահարոնյան /_____/ /_____/ 18.բ. Կ.S.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.S. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.S. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.